

21772  
20X

362
U-23

1899

2010

362  
Կ-23

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ  
'Ի ԿԻՊՐՈՍ



# ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

(1898 Մարտ I — 1899 Փետրվար 28).



ԳԱՀԻՐԷ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ

1899

362

Ա-23 *mf*

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅ

Ի ԿԻՊՐՈՍ

3/5



# ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

(1898 Մարտ 1 — 1899 Փետրվար 28).

1005  
22450



ԳԱՀԻՐԷ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Ս. ԴԱՐԹԻՆՆԱՆԻ

1899

8788

## ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

### ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային հաստատութեան երկրորդ բարեկան Տեղեկագիրը այսօր կը ներկայացնեմք մեր պատուական ազգայնոց ուշադրութեան :

Արդարեւ հսկայաբաշխ յառաջդիմութեան արդիւնք չեինք կարող ցոյց տալ, պարագաներն եւ մեր միջոցներն 'ի նկատ առնելով : Այսուամենայնիւ Կրթարան-Որբանոցի անցեալ միամեայ գործունեութիւնն այնքան գոհացուցիչ կը գտնեմք, — եւ յուսամք թէ սեռակիս ընթերցողք եւս նոյն համոզումը պիտի ստանան, — որ կը փափագեինք ամեն սարի միայն այսչափ յառաջդիմութիւն կարենալ արձանագրել : Յամբաւալ այլ հաստատուն եղած է մեր ընթացք ցաշտ վայր. կը փափագինք որ այս լինի Որբանոցիս նշանաբան ընդ միշտ :

Խնամակալութիւնս մեծ գոհունակութիւն կ'զգայ որ անցեալ սարի իւր սածած յոյսերն այս սարի մասամբ պսակուած՝ կը տեսնե՛ Տնօրէն Խորհրդոյ կազմութեամբ, որ Կիպրոսի պատուական ազգայնոց մեջէն ընտրեալ բարեսէր անձերէ կը բաղկանայ : Սոքա յանձնառու եղած են Որբանոցի վերայ 'ի մօտոյ հսկել, եւ ամենայն իւրի մեր գործն, որ է Ազգիս մանկէտոյն օգուտն, դիւրացնել : Եթէ անցեալ սարի հաստատութեանս վստահելի եւ կանոնաւոր լինելու վրայ կը խօսեինք, այս սարի առաւել եւս ուրախանալու առիթ ունիմք Տնօրէն Խորհրդոյ վերջնական կազմութեամբն :

Մեր միւս փափաքն էր՝ ունենալ Օժանդակ Մասնա-

խումբեր այլ եւ այլ հայաբնակ քաղաքաց մէջ, որպէսզի նոյն քաղաքաց մեր յարգելի Ազգայնոց նուէրներն հաւաքեն եւ հետզհետե Խնամակալութեանս հասցնեն : Այս մասին եւս զոհութեամբ կը յայտնեմք որ Լօնսայի եւ Փարիզի մէջ այսպիսի մասնախումբեր հաստատուած են այժմ, որոց անդամոց անուանմք պիտի գտնեն ընթերցողք 'ի Տեղեկագրիս : Յոյս ունիմք որ մի այսպիսի խումբ եւս Ամերիկայի մէջ պիտի կարենամք ունենալ 'ի մօտոյ :

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւն յատկապէս կը յայտնենք առ Ազն. Տիկին Տիպեր Ն. Ներսիսեան 'ի Փարիզ եւ առ Մեծ. Բարթիկ Էֆ. Նահապետեան 'ի Գահիրէ, որք անցեալ շրջանին մէջ մասնաւոր ջանք եւ ժամանակ զոհեցին հանգանակութեան համար եւ մեծապէս օգնեցին Որբանոցին, ինչպէս պիտի տեսնուի հաշուեցոյցէն :

Անցեալ շրջանին մէկ անպատեհութիւնը չենք կարող լուրսեամբ անցնիլ, այն է Տեսչի երկարատեւ բացակայութիւնը Որբանոցէն : Այլ եւ այլ պատճառներով Հաստատութեանս նուէրներն սկսած էին պակասիլ եւ վնասուներն խիստ անկանոն վիճակի մատնուած էին, այնպէս որ Խնամակալութեանս մտահոգութիւն պատճառել սկսած էր մեր որբոց ապագայ խնամատարութեան եւ կրթութեան խնդիր : Այս վիճակէն յառաջ գալիմք շարեաց դարման տանելու եւ անսոյգ կացութեան վերջ տալու համար՝ յարմար դատեցինք խնդրել Տեսուչէն որ անգամ մի եւս անձամբ այցելէ այն քաղաքներ ուր առաջին տարին նուիրատուներ ունեցած էինք, եւ տարեկան նպաստներ կանոնաւորելու միջոցներ հայտնաբեր, որպէսզի Որբանոցի հասոյթի աղբիւրներն փոքր 'ի շատե հաստատուն հիման վրայ դրուին : Եւ յիշուի մեծ ուրախութիւն է մեզ տեսնել այժմ որ այս մասին Տեսչի ուղեւորութիւնն արդիւնաւոր

եղաւ : Նորա աշխատութեամբ վերոյիշեալ մասնախումբեր 'ի Լօնսա եւ 'ի Փարիզ կազմուեցան, եւ Մարտիկ ու Գահիրէի մէջ օգտակար կարգադրութիւններ եղան : Խնամակալութեանս համար ապահովութեան եւ քաջալերութեան մեծ պարագայ մի է որ այսօր երկոցուն մայրաքաղաքաց մէջ Ազգիս քաջամտօք անձանց հովանաւորութեան ներքոյ օժանդակ մասնախումբեր ունի, որոց բարեսիրութեան եւ ազգասիրութեան շնորհիւ, այսուհետեւ ո՛չ միայն Խնամակալութիւնս ազատ պիտի լինի մտահոգութենէ՝ այլ եւ հարկ չ'պիտի մնայ որ Տեսուչն բացակայ գտնուի իւր պատճօնավայրէն եւ ճանապարհորդական ծախքեր լինին : Լիայոյս ենք որ յետ այսու մեր յարգելի ազգայինք իւրեանց կարողութեան չափ պիտի աշխատին մեր բեռն քերթեցնել՝ նուէրները կանոնաւորապէս վճարելով, եւ այլոց եւս, որ սոյն բարի գործին անտեղեկ են՝ բացատրել, եւ յորդորել զնոսա՝ 'ի նուիրատուութիւն :

Յայտնի է որ Հաստատութեանս սկզբնական նպատակն է հայ որբոց խնամարկութիւնն ու կրթութիւնը : Բայց որովհետեւ Խնամակալութիւնս չուզեց որ անոր դռները զոց մնան այնպիսի ուսանողաց դռն, որոց ծնողք յօժար եւ կարող են վճարելու՝ որոշուած էր ձրիավարք որբերէն զատ ընդունիլ նաեւ բոշակաւոր աշակերտներ, տարեկան 12 անգղիական ոսկի բոշակաւ, կանխիկ վճարելի : Այժմ տեսնելով որ այս ամենամասնու գումարին իսկ վնասուան ծնողաց ունանց կողմէ դժուարութեան կը հանդիպի, Խնամակալութիւնս հարկադրուեցաւ յանձնարարելու Տնօրէն Խորհրդոյն որ յետ այսու մեր Կանոնագրոյ Տրդ յօդուածի տրամադրութիւնը խստիւ եւ առանց բացառութեան 'ի գործ դրուելով ամեն տարւոյ սկիզբը բոշակները գանձուին, եւ որոշեալ ժամանակէն մինչեւ մէկ

ամիս չը վնարող առակերսն իր ծնողաց կամ պարագայից վերադարձուի: Քանի որ բարեսէր հասարակութեան կողմէ մեզ յանձնուած նուէրները բոլորովին անհետունջ եւ որք մանուկներու համար են՝ բոշակաւորներու վնարման մասին դրուած կանոնը խստիւ յարգելու պարտական եմք: Ուստի կը խնդրուի որ ծնողներն ալ ազգասիրաբար նկատողութեան առնուն այս կէտք:

Հաստատութեանս ձեռնարկած առակերաց թիւն, որ ըստ տրամադրութեան մեր Կանոնագրոյ Չրդ յօդուածին այժմ 20 պիտի լինէր՝ գործիս յաջող ընթացից ներելովմ բարձրացուցիւնք 23 ի: Ձեռնարկած ենք ընդունելու նաեւ երկու որք առակերներ՝ ՚ի հաշիւ անցեալ տարի հանգուցեալ Անգղիացի ազնուական Տիկին Աւիուդա Լէյի, որ իւր ՚ի Մարբրօ հաստատեալ բժշկի, մերս մեծանուն Գօկդօր Քալանթարեանցի բարեխօսութեամբ հանած էր կտակել 50 ոսկի, որոշեալ պայմանադրութեամբ: Օրհնե՛ալ լինի հանգուցելոյն յիշատակը: Մաղթենք որ սոյն բարի օրինակի հետեւողք բազմաման մեր մեջ:

Վերոյիշեալ 23 ձեռնարկածներէն զոս 16 բոշակաւորներ եւս ունենալով՝ Հաստատութեանս մեջ կ'ըրթուին ստացող գիշերօթիկ առակերաց թիւը կը մօտենայ 40 ի:

Արհեստական նիւղէն Շերամաբուծութեան դասերը դժբաղդաբար դադրած են՝ Նիկոսիոյ Շերամաբուծական վարժարանի փակուելուն պատճառաւ: Իսկ Ասաղձագործութիւնն, որ առժամապէս դադրած է, ինչպէս կը տեսնուի Տնօրէն Խորհրդոյ Տեղեկագրին մեջ, Խնամակալութիւնս կը խորհի վերսկսիլ երբ պարագաները ներեն: Արհեստից այս նիւղը ծախուց կարելու գումարի կը կարօտի. ուստի պատրաստուած առարկայից վանառման համար Կղզւոյն մեջ ասպարէզ գտնելու հարկն ակներեւ լինելով՝ պատրաստութիւն կայ նկատողութեան առնելու

մեր դրամական կացութիւնն եւ ըստ այնմ տնօրինելու: Խնամակալութիւնս, արհեստից օգտակարութիւնն արդէն միշտ աչքի առաջ ունեցած՝ եւ Ասաղձագործութեան յատուկ կարելուութիւնն ըմբռնած լինելով՝ զայն վերսկսել տալու չ'պիտի վարանի, երբ կարելի լինի, նոյն իսկ փոքրիկ զոհողութեամբ մը:


Վերջացնելէ առաջ մեր խորին շնորհակալութիւնը կը յայննեմք Հաստատութեանս բոլոր բարերարաց, սատարողաց եւ համակողողաց, նոյնպէս այն բարեսէր անձնաւորութեանց եւ ընկերութեանց որոնք մասնաւոր սաներու պաշտպանութիւն ստանձնած են ազնուաբար: Շնորհակալութիւն Տնօրէն Խորհրդոյ մեծարոյ անդամոց, եւ բարեջան ուսուցչաց որք կը հսկեն եւ կ'աշխատեն Կրթարան-Որբանոցիս բարեկարգ յառաջդիմութեան: Մասնաւոր պարտականութիւն կ'զգամք նաեւ առ յարգոյ Տեսուչն, որ է նաեւ Հաստատութեանս հիմնադիրն, եւ որ առաւել քան երկու տարի է ամենայն համբերատարութեամբ անվիասաբար քանակով ամեն դժուարութիւն եւ արգելք, մարդասիրական զգացմամբ ձեռնարկեալ աշխատած է Հաստատութեանս յարատեւ պահպանման համար, իր յոյսը դնելով ապագային վրայ: Անհարակոյս նորա անձնուէր ծառայութիւնք կը գնահատուին արժանավայել համակրանքով արդարատեւ հասարակութեանն ինչպէս եւ մեզմէ:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅԻՆ ՈՐ Ի ԿԻՊՐՈՍ.


Մանչեսթըր, 16 Մարտ 1899.



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text appears to be organized into several paragraphs, with some lines being more prominent than others. The overall appearance is that of a very faded or ghosted document.







Տղաները սովորում են  
 Come into the  
 Forbid them not.

ARMENIAN INSTITUTE & ORPHANAGE  
 NICOSIA, CYPRUS.

1899

ԱՂԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅ

ԱՂԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅ

ի ԿԻՊՐՈՍ



ԻՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Նախագահ, Արժ. Տ. Թորոս քահանայ Տ. Իսահակեան, հոգևոր հովիւ Հայոց 'ի Մանչեսթըր.

Գանձապետ, Մեծ. Տիար Սարգիս Եղիազարեան, S. Eliazarian Esqre, 21 Dickinson Street, (Manchester).

Պատուակաջ քահանայար, Մեծ. Տիար Յովհաննէս Անդրէասեան, Հաշտարար դատաւոր, O. Andreasian Esqre, J. P., (Manchester).

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԳ Ի ՆԻԿՈՍԻԱ. (Կիպրոս).

Նախագահ, Մեծ. Տիար Աբխաղով Իւթիւճեան, Ա. Թարգմանիչ Կառավարութեան.

Գանձապահ, Մեծ. Տիար Արզար Կիւլէզեան.  
 ,, Յարութիւն Մէլիքեան.  
 ,, Վահան Քիւրքեան.

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ԼՕՆՏՈՆ

Ա.Տեևապետ, Մեծ. Տիար Ներսէս Ներսէսեան, Դեր-  
Հիւպատոս Պարսկաստանի, (N. Ner-  
sessian Esqre, 48 Doughty Street,  
Mecklenburgh Square, London,  
W. C.).

Գանձապահ, Մեծ. Տիար Ա. Կիւլլէնկեան.  
Գաւառապար, „ Ռ. Սեւեան.

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ Ի ՓԱՐԻՉ

Նախագահ, Գեր. Տ. Սուքիաս վարդապետ Պա-  
րոնեան. Հոգեւոր Հովիւ Հայոց 'ի  
Փարիզ.

Ա.Տեևապետ, Մեծ. Տիար Յովսէփ Իսքէնաէր,  
(M. J. Iskender, 36 rue de la Tour  
d'Auvergne, Paris).

Դեր-Ա.Տեևապետ, Մեծ. Տիար Յ. Միքայէլեան.

Գանձապահ, Մեծ. Տիար Կարապետ Բէհլիվա-  
նեան, (M. G. Péhliavian, 15 rue  
Chateaudun, Paris).

Գաւառապար, Մեծ. Տիար Արամ Սեթեան.

ՏԵՂԵԿԱԳԻՐ Բ. ՇՐՋԱՆԻ

Արժ. Նախագահ եւ Մեծ. անդամ  
Խնամակարարեան  
Ազգ. Կրթարան-Որբակոցի Կիպրոսի  
Ի ՄԱՆՉԵՍԹԵՐ

Տեարք,

Անցեալ, 1898 տարւոյ Մարտ սկիզբէն ի վեր  
ստանձնած լինելով Կրթարան-Որբանոցի Տնօրէն  
Խորհրդոյ պաշտօնը, զոր պատիւ ըրած էիք յանձ-  
նարարել մեզ, ջանագիր եղած ենք ըստ կարեայ  
կատարել զայն, իբրև ազգային եւ մարդասիրա-  
կան քաղցր պարտականութիւն մը :

Այսօր կը լրանայ երկրորդ տարեշրջանն,  
ուստի կը փութանք Պատ. Խնամակալութեանդ  
նկատողութեան ներկայացնել Հաստատութեանս  
միամեայ անդեկագիրն ու հաշուեկշիռն, հանդերձ  
խորհրդածութեամբ մի քանի կէտերու վրայ :

ՈՒՍԱՆՈՂՔ

Առանց վարանելու կրնամք ըսել թէ մեր ուսանողք  
այս միամեայ շրջանը կը բոլորեն արդիւնաւոր կերպով :  
Բարեկրթութեան եւ վարուց մասին, նոքա առհասարակ  
ունեցան օրինակելի ընթացք, եւ գոհունակութիւն  
պատճառեցին իրենց հսկողներուն : Չանագան քաղաք-

ներէ հասած եւ կենաց արբեր վիճակներէ անցած պատանիներու եւ մանուկներու համախմբութեան մը մէջ՝ զժուար է գտնել, կը կարծենք, աւելի գեղեցիկ օրինակ մը՝ խիստ կարգապահութեան, մաքուր վարուց եւ վայելուչ կաց ու նիստի։ Նոքա ընդհանրապէս ուշիմ եւ ընդունակ, եւ ամենքն ալ աշխատասէր լինելով, մտաւորապէս կը զարգանան օր ըստ օրէ։ Այս կէտն աւելի ուշադրաւ է երբ նկատողութեան առնուի մանաւանդ որ գասերէն գատ պարտական են օրական մի քանի ժամ զոհելու արհեստից վարժութեան։ Նոցա մտաւոր յառաջդիմութիւնն աւելի եւս զգալի պիտի լինէր եթէ Տեսուչն չը հարկադրուէր երկար ատեն բացակայելու այս շրջանի միջոցին։ Որքանոցիս ընդհանուր զարգացման տեսակէտով էական կարեւորութիւն ունեցող խնդիր մ'է Տեսչին տեւական ներկայութիւնն, զոր ասկէ վերջ կարելի ընելու համար՝ կը յուսամք թէ Պատ. Խնամակալութիւնդ եւ գործին բոլոր բարեկամներն պիտի հաճին միջոցներ ձեռք առնուլ։

Վերջին հարցաքննութիւնները, մասնաւոր կերպով կատարուած են փետրուարի առաջին կիսուն, եւ իւրաքանչիւր աշակերտի կարողութիւնը նշանակուած մասնաւոր ատիճանացոյցի մէջ, զոր կը ներկայացնեմք ընդ Տեղեկագրոյս։

Բարձրագոյն դասարանի աշակերտք, յառաջիկայ շրջանէն սկսեալ, պիտի զբաղին հետեւեալ առարկաներով։

Հայերէն. — Համառօտ Քերականութիւն գրարար լեզուի, հրահանգներ, վերլուծութիւն, հատընտիր ընթերցուածք, շարադրութիւն, ուսումնի ըրբան հատընտիր հատուածոց։



ARMENIAN INSTITUTE OF ORPHANS  
NICOSIA CYPRUS

1899

ԱՐՄԵՆԻԱՆ ԳՐԹԻՆՆԵՐԻՆ  
ՔՆՈՍՅԱ

**Թուրքերէն.** — Ընթերցում, ուղղագրութիւն, թարգմանութիւն, պարզ կանոնք :

**Անգլիերէն.** — Թարգմանութիւն, ՚ի բերան ուսում ընտիր հատուածոց, հրահանգք անգլիերէնէ ՚ի հայերէն, եւ փոխադարձաբար :

**Ֆրանսերէն.** — (Մասնաւորաց համար) :

**Երօտի.** — Կրօնագիտութիւն եւ համառօտ պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ :

**Թուազիսութիւն.** — Տոկոսի կանոն, գործնական թուարա՛ութիւն :

**Աւստրալիացիութիւն.** — Շար. քաղաքական աշխարհագրութեան, բնական եւ ուսումնական աշխարհագրութեան տարերք :

**Ազգ. պատմութիւն.** — Բազրատունիք, Ռուբինեանք, Հպատակութեան շրջան :

**Օսմ. պատմութիւն.** — Համառօտ գիտելիք :

**Իւրազիսութիւն.** — Կենդանական եւ բուսական աշխարհաց վրայ գիտելիք :

**Առողջապահութիւն.** — Գիտելիք առողջապահութեան եւ մարդակազմութեան վրայ :

**Գեղագրութիւն.** — Հայերէն, թուրքերէն եւ անգլիերէն :

**Պեճագրութիւն.** — Մարմնոյ մասեր, կահեր, անօթներ, կենդանիներ, բոյսեր, գիւղային տեսարաններ, աշխարհագրութեան քարտէսներ (ընդօրինակութեամբ) :

**Երգեցողութիւն.** — Եկեղեցական եւայլն :

Աստ մասնաւոր ուրախութեամբ կը յիշատակեմք որ Բարիզի Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութիւնը կրթարան-Որբանոցիս մէջ երկու սան որդեգրած է, այն պայմանով որ անոնցմէ յաջողագոյնը իւր ընթացքն այստեղ աւարտելէ վերջ, յիշեալ ընկերութեան խնամքով Ֆրանսա ուղեւորի եւ Մըլէօնի էֆօլ Նօրմալ վարժարանին մէջ երկու տարի վարժապետութեան արհեստին հետեւելով վերադառնայ իբր ուսուցիչ ծառայելու Հաստատութեանս մէջ :

Նաեւ այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնեմք տեղւոյս Ս. Եկեղեցւոյ վարժարանին ուսուցիչ Պ. Յ. Ասատուրեանին եւ վարժուհի Օր. Ռ. Սարգիսեանին, իրենց մատուցած ձրի ծառայութեանցը համար : Սոցա առաջինն մէկ տարիէ ի վեր սկսած է եւ կը շարունակէ Երգեցողութեան դասերն, եւ վերջինն երեք ամսոյ չափ աւանդած է անգլիերէնի դասերը, դասախօսի պաշտօնին թափուր մնացած միջոցին :

Մեր սաներուն առողջական վիճակն ալ, ուրախ եմք ըսելու թէ գոհացուցիչ է: Թէեւ մարմնամարզի կանոնաւոր դասեր չ'ունին՝ բայց թէ՛ շէնքին մէջ եւ թէ՛ գուրսը, դաշտի մէջ, խաղի եւ պտոյտի ստէպ առիթներ ունենալով, նոքա իրենց առողջ եւ բարեկազմ երեւութովն յատուկ ուշադրութիւն կը գրաւեն : Քաղաքիս փորձառու բժիշկներէն Տօքթ. Քարլէզի հաճեցաւ, նիւփորձառու բժիշկներէն Տօքթ. Քարլէզի հաճեցաւ, նիւփթական դոյզն վարձատրութեան փոխարէն, ստանձնել այցելու բժշկի պաշտօնը, եւ շաբաթը երկու եւ աւելի անգամներ գալով կը մատուցանէ իր արհեստին ծառայութիւնները: Եթէ վաղանցուկ թեթեւ հիւանդութեանց դէպքերէ զատ ունեցանք մէկ երկու աշակերտ, որոնք մասնաւոր դարման պահանջեցին՝ ատոնք ալ — թէեւ

բժշկական վկայաթղթերով բնորոշուած՝ — անցեալ հիւանդութեան մը կամ սնունդի եւ խնամքի պակասութեան հետեւանքը կը կրէին, եւ իրենց կազդուրումը կը պարտին Հաստատութեանս :

Մեր ուսանողներուն բարոյական, մտաւորական եւ ֆիզիքական կացութեան այս ընդհանուր պատկերը, կը յուսանք թէ գոհացնէ այն բարեսէր նուիրատուները, որոնք այս գործին հիմնարկութեան եւ յարատեւութեան նպաստած են : Կրնանք ըսել թէ արուած նիւթական միջոցներու յոյժ չափաւորութիւնը աչքի առջեւ ունենալով, այս ձեռնարկն յաջողագոյն ընթացած է ցարդ, եւ կը խոստանայ արդիւնաւոր ապագայ : Ուսմանց հետ մէկտեղ՝ մասնաւոր խնամք տարուած է միշտ՝ աշակերտաց աւանդելու բարոյական առողջ դաստիարակութիւն մը, եւ զօրացնելու անոնց մէջ մաքուր նկարագիր եւ գործունէութեան եւ աշխատասիրութեան սքի : Արհեստներու վարժութենէն զատ Որբանոցին յատուկ ներքին ծառայութիւն կրնալ — հաց թխել, սեղան յարգաբեւոյ, սենեակները մաքրել, բանջարանոցը մշակել եւ այսպիսի աշխատութիւնք — սիրով կատարուած են անխափ, թէ՛ ձրիավարժներու եւ թէ՛ թոշակաւորներու ձեռքը :

**ԱՐՏԵՍՏԱԿԱՆ ՃԻՅՂ**

Արհեստական աշխատութիւններէն՝ Դերձակութիւնն եւ Կօշկակարութիւնը կանոնաւորապէս շարունակուեցան տարւոյս ընթացքին մէջ : Իսկ Ատաղձագործութիւնը հարկ եղաւ դադրեցնել, առ այժմ, զլիաւորապէս անոր համար որ աւելի կարեւոր գումար մը ծախսելու պէտք կը տեսնուի՝ այդ ճիւղին վարպետի վարձքը եւ ատաղձի գինը հոգալու : Տնօրէն Խորհուրդս այս արհեստին կարեւորութիւնն ի նկատ առնելով կը


փափաքի վերակսիլ: Նոյնչափ կարեւորութիւն ունի Շե-  
րամարուծութեան ճիւղն, որուն հետեւեցան, նախընթաց  
տարին, մեր սաներէն մէկ մասը: Ցաւալի է որ քաղա-  
քիս Շերամարուծական վարժարանն, որ անգլիական  
ընկերութեան մը ձեռքը հաստատուած էր, յարատեւու-  
թիւն չ'ունեցաւ. եւ մեր ուսանողք ոչ եւս պիտի կարե-  
նան, — գէթ առ այժմ — օգտուիլ այդ գործէն:

Կօշկակարութեան եւ Դերձակութեան ճիւղերը օգ-  
տակար կերպով կը շարունակուին: Այս աշխատութեանց  
չնորհիւ, կարելի էր, աշակերտաց հազուսաններուն եւ  
կօշիկներու պատրաստութենէն զատ, մասնաւոր շահ ալ  
գոյացնել, եթէ հիմակուան մէկ կարի մեքենային վրայ  
կարենայինք աւելցնել ուրիշ մի քանի հատ եւս, դերձակ  
եւ կօշկակաչ աշակերտներու տրամադրութեան ներքեւ  
դնելու համար:

Տնօրէն Խորհուրդս ալ մեծ կարեւորութիւն կ'ըն-  
ծայէ արհեստներու խնդրոյն, եւ կը փափաքի այս մասին  
իր մի քանի կարծիքներն ուրիշ առթիւ ներկայացնել  
առ Պատ. Խնամակալութիւնդ:

**ԲՆԱԿԱՐԱՆ**

Որբանոցը կը մնայ միեւնոյն շէնքին մէջ. անցեալ  
տարիէն վարձուած, տարեկան 30 ոսկիով: Այս շէնքը  
թէեւ ունի շատ յարմարութիւններ, բայց, որովհետեւ  
զպրոց ըլլալու նպատակով շինուած չէ, եւ մանաւանդ,  
որովհետեւ աշակերտներու թուոյն հեազհեաէ աճման  
պատճառաւ անբաւական պիտի լինի մեր պէտքերուն՝  
աւելի ընդարձակ շէնք մը վարձելու հաշին ալ զգալի  
է օրէցօր: Միւս կողմէ քանի որ Որբանոցիս յատուկ  
համեստ շէնքի մը կառուցման համար 300 ոսկւոյ չափ  
գումար մը կրնայ բաւել — ինչ որ հազորդուած էր



Ա. Գ. Մ. Ա. Գ.  
ԱՊՐԱՆ-ՈՐԲԱՆՑ  
Ի ԿՐԿՐԻԼԻ

1899

ARMENIAN INSTITUTE & ORPHANAGE  
NICOSIA CYPRUS

Առաջին Տեղեկագրին մէջ ալ — ուրիշ ամեն առաւելութեանց հետ մէկտեղ մեծ խնայողութիւն մը պիտի լինէր, եթէ հետաքնակ ազգայինք այս նպատակաւ բացառիկ աջակցութիւն ընծայէին Հաստատութեանս : Մեծ ուրախութեամբ իմանալով Տիրար Քիւրքճեանէն, թէ Անդլիաքնակ բարեսէր ազգայնոց մին խոստացած է Որբանոցի շինութեան պէտք եղած հողին համար գումար մը վճարել, եւ թէ այլք խոստացած են շինութեանը մասամբ նպաստել, կը յուսամք թէ այս մասին մեր տածած փափաքն ալ մօտաւոր ապագայի մը մէջ իրագործուի եւ մեր սաները ազգային սեփականութիւն եղող յարկի մը ներքեւ պատսպարուին :

#### ԵԼԵԻՄՏԻՑ ՀԱՇԻՒՆԵՐԸ

Տեղեկագրոյս հետ կը ներկայացնեմք Կրթարան-Որբանոցիս երկրորդ տարեշրջանի հաշուեկշիռն, որմէ կը տեսնուի որ 1898 Մարտ 1էն մինչև 1899 Փետր. 28, մէկ տարուան մէջ Որբանոցի ծախքն եղած է՝ 335 անգլ. ոսկի, 16 շիլին, 6 բէնի : Այս գումարէն զեղջելով 15 ոսկիէ աւելի գումար մը, որ է պատրաստ պաշարի եւ նոր գնուած կահկարասեաց արժէքը՝ կը մնայ 320 ոսկի ծախք, միջին հաշուով 32 գիշերօթիկ աշակերտաց ուտեստի, զգեստի, կրթութեան, արհեստական վարժութեան եւ այլ պէտքերուն համար, որով կը լինի աշակերտի գլուխ 10 անգլ. ոսկի. մինչդեռ նախորդ տարուան ծախքը, աշակերտի գլուխ կը հասնէր 12 <sup>1</sup>/<sub>2</sub> անգլ. ոսկեոյ : Այս տարբերութիւնը կը պարտինք տարւոյս մէջ արմտեաց համեմատաբար աժանութեան, պաշարներու մէկ մասին կանխաւ պատրաստութեան եւ աշակերտաց թուոյն յաւելման :

Ինչպէս անցեալ, նոյնպէս եւ այս տարւոյ ծախսոց

հաշուէն դուրս կը մնան Տխար Բիւրքճեանի ճանապարհ-  
հորդութեան ծախքերը, որոնց մանրամասն հաշուեցոյցն  
արդէն հաղորդուած է Պատ. Սնամակալութեանը:

Կատարեալ յաջողութիւն մաղթելով Ձեր հանրո-  
գուտ ջանից,

Մնամք խորին յարգանք

Անդամք Տփղիսի Խորհրդոյ,

Գանձապահ, Նախագահ,

Ա. ԿԻԿԷՋԵԱՆ Ա. ԻԹԻԻՃԵԱՆ

ԱՐՅԻՆ ՄԷԼԻՔԵԱՆ

ՎԱՀԱՆ ՔԻԻՐՔՃԵԱՆ

1899 Փետր. 28

ՆԻԿՈՍԻԱ (Կիպրոս).

## ՀԱՇՈՒԵՅՈՅՑ ԾԱԽՈՒՅ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՐՁԱՆԻ

(1898 Մարտ 1 — 1899 Փետրվար 28)

Անգղ. Ոսկի Ծ. Բ. Ա. Ո. Ծ. Բ.

### ՊԱՐՏՔԻ ՎՃԱՐՈՒՄ

Աւաջին տարւոյ հաշուեկոտէն մնացած 251 Դր. . .

### ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁՔ

Արա պէլի սան համար . . . . .

### ԿԱՀԱՐԱՍԻՔ

Նորէկ ուսանողաց անկողին, մահճակալ, նստարան.

Սեղանասան, խոհանոցի եւ նկշարանի առարկայք . . .

### ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅՔ

Գիրք, քուրթ, քարտ, գրի եւ զծագրութեան առարկայք

### ՈՒՏԵՍՏԻ ԾԱՍՔ

Միջին հաշուով 32 առակերտի համար . . . . .

### ՋԱՆԱՋԱՆՔ

Լուացարար, բաղնիք, օճառ . . . . .

Դեղ եւ բժշկի վարձք . . . . .

Թղթակցութեան ծախք, վարչութեան եւ ուսանողաց .

Լուսատուութեան քարտի եւ ձէք, ճրագ, մով եւ այլն.

Փուսի եւ լուացքի համար վայր . . . . .

Ածուխ . . . . .

Ջաղացքի վարձք եւ ձուար խաւելու . . . . .

Թղթեղէն եւ սպագրութիւնք . . . . .

Սափրիչի . . . . .

Այլեւայլ ծառայութիւնք, փոխադրութիւնք, բանջարա-  
նոցի ծախք, նեռագիր, նորագրութիւնք, ներկ, եւլն.

### ԱՐՇԵՍԱՆՈՑ

ԴԵՐՁԱԿՈՒԹԻՒՆ

Վարպէի վարձք . . . . . Անգղ. ոսկի 6. 6. 3

Կարի մեքենայ . . . . . » 3. 5. 2

Հանդերձեղէնի համար ապրանք » 13. 13. 8

ԿՕՇԿՍ.ԿԱՐՈՒԹԻՒՆ

Վարպէի վարձք . . . . . Անգղ. ոսկի 9. 5. 7

Գործիքներ . . . . . » 0. 2. 11

Կօշիկներու համար կաշեղէն » 14. 13. 5

ԱՏԱՂՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Վարպէի օրականներ . . . . .

### ՊԱՇՏՈՆԵՑ ԹՈՇԱԿՆԵՐ

Ուսուցիչներու . . . . .

Խոհարարի եւ սնտուկիին . . . . .

	Անգղ.	Ոսկի	Ծ.	Բ.	Ա. Ո.	Ծ.	Բ.
ՊԱՐՏՔԻ ՎՃԱՐՈՒՄ					1	7	7
ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁՔ					30	0	0
ԿԱՀԱՐԱՍԻՔ	6	16	6		8	16	0
ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅՔ					1	9	0
ՈՒՏԵՍՏԻ ԾԱՍՔ					144	18	7
ՋԱՆԱՋԱՆՔ	4	12	5				
ԱՐՇԵՍԱՆՈՑ							
ԴԵՐՁԱԿՈՒԹԻՒՆ							
Վարպէի վարձք							
Կարի մեքենայ							
Հանդերձեղէնի համար ապրանք	23	5	1				
ԿՕՇԿՍ.ԿԱՐՈՒԹԻՒՆ							
Վարպէի վարձք							
Գործիքներ							
Կօշիկներու համար կաշեղէն	24	1	11				
ԱՏԱՂՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ							
Վարպէի օրականներ	1	6	1		48	13	1
ՊԱՇՏՈՆԵՑ ԹՈՇԱԿՆԵՐ							
Ուսուցիչներու	51	0	0				
Խոհարարի եւ սնտուկիին	15	5	5		66	5	5
<b>ԸՆԴՀԱՆՈՒՄ</b>					<b>335</b>	<b>16</b>	<b>6</b>

28 Փետրվար 1899, Նիկոսիա (Կիպրոս).

Վասն նշանութեան ստորագրեալ

Վ. ՔԻԻՐՔՃԵԱՆ Ա. ՄԷԼԻՔԵԱՆ Ա. ԿԻԿԷՋԵԱՆ Ա. ԻԹԻԻՃԵԱՆ



**ՌԻՍԱՆՈՂՔ**

	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ	ՄԻՋԻՆ ԹԻՒ ՆԻՇԵՐՈՒ		
			Վարժ	Ուսում	Արհեստ
<b>Գ. ԴԵՍԱՐԱՆ</b>					
1 Դանիել Գարամանուկեան	Այնթապ	Զրիավարժ	92	83	95
2 Լուսինիկ Գրքաբերան . . .	Իսկէնտէրն	»	90	84	85
3 Կարապետ Գունաղճեան	Անտիոք	Թոշակաւր.	87	89	92
4 Մովսէս Սուլթանեան . . .	Նիկոսիա	Երթեւեկ	92	89	95
5 Յակոբ Մէրտէնեան (1) . .	Պէլլան	Զրիավարժ	88	87	85
6 Յարութիւն Էթմէքճեան (2)	Բիլիս	»	95	87	93
7 Յովհաննէս Լէյլէկեան . .	Այնթապ	Թոշակաւր.	93	75	91
8 Ստեփան Մարտիրոսեան(3)	Ակն	Զրիավարժ	95	88	92
9 Տօնապետ Թոմաճանեան .	Խարբերդ	Թոշակաւր.	98	88	92
<b>Բ. ԴԱՍԱՐԱՆ</b>					
10 Արմենակ Սլաօյաճեան . .	Կեսարիա	Երթեւեկ	75	79	89
11 Արշակ Գալուստեան . . .	Արաբկիր	Թոշակաւր.	96	92	85
12 Ազեքսանդր Շամլեան . .	Իսկէնտէրն	»	88	92	89
13 Գրիգոր Մելիքեան . . . . .	Նիկոսիա	»	86	84	81
14 Յակոբ Շամլեան . . . . .	Իսկէնտէրն	»	94	92	90
15 Պօղոս Ալեքսանեան . . . .	Մարաշ	Զրիավարժ	90	86	87
16 Ռափայէլ Շամլեան . . . .	Իսկէնտէրն	Թոշակաւր.	89	84	83
17 Ռափայէլ Փիլիպպոսեան .	Սօղուլուզ	Զրիավարժ	94	88	85
18 Սահակ Սահակեան . . . .	Տարսն	»	88	86	85
19 Սեդրաք Աճէմեան . . . . .	Տիարպէքք	»	90	87	95
20 Սիմոն Վանեան (4) . . . .	Ակն	»	—	—	—
21 Տիգրան Թօփալեան . . . .	Կիւրին	»	97	90	85

ԾԱՆՈԹ. — (1) Եւ (2) — Այս երկու ուսանողաց պատկանութիւնն արւոյս սկիզբէն ի վեր ասանճեաժ է Բարձր Պատ. Հայկազեան-Ուսումնասիրաց Ընկերութիւնը:  
 (3). — Այս ուսանողի պատկանն է Մեծ. Տիար Աւեսիս Ժամկոչեան 'ի Մանչեսթր:  
 (4). — Այս նոր ուսանողի պատկանն է Գանիբէի Պատ. Բարեգործական Ընկերութիւնը:

	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ	ՄԻՋԻՆ ԹԻՒ ՆԻՇԵՐՈՒ		
			Վարժ	Ուսում	Արհեստ
<b>Ա. ԴԱՍԱՐԱՆ</b>					
22 Աշոտ Գասարճեան . . . . .	Սիւ	Թոշակաւր.	95	88	84
23 Արմենակ Աթանասեան . .	Ատանա	Զրիավարժ	90	84	85
24 Արմենակ Գրիգորեան (5) .	Հալէպ	»	88	87	83
25 Արշակ Մէֆէրեան . . . . .	Կ. Պոլիս	Երթեւեկ	89	87	—
26 Գասարաբ Կարապետեան .	Պաղէէ (Հայլեւ.)	Զրիավարժ	90	87	88
27 Գրիգոր Աղաճանեան . . . .	Արաբկիր	Թոշակաւր.	90	86	75
28 Միսաք Պօղիկեան . . . . .	Իսկէնտէրն	»	86	85	70
29 Յովհաննէս Աղամեան . . . .	Բէնապ	»	95	90	94
30 Յովհաննէս Պէրպէրեան . .	Բիլիս	Զրիավարժ	92	84	84
31 Ռուբէն Թազուրեան . . . .	Անյրզի	»	88	80	80
32 Սարգիս Պետրոսեան . . . .	Հասան պէլլի (Հայլեւ.)	»	89	86	84
33 Սեդրաք Պօղիկեան . . . . .	Իսկէնտէրն	Թոշակաւր.	87	87	85
34 Ստեփան Զօրպաճեան . . .	Մարաշ	»	90	87	85
<b>ԸՆՏԵԼԱՐԱՆ</b>					
35 Աբրահամ Զաղլասեան . . .	Բիլիս	Զրիավարժ	—	—	—
36 Գարեգին Հաղարապետեան	Տարէնտէ	Թոշակաւր.	90	84	70
37 Դաւիթ Վարդելօսեան . . .	Մարաշ	Զրիավարժ	81	87	73
38 Լեւոն Շալճեան . . . . .	Տիարպէքք	»	81	84	75
39 Խաչիկ Փանոսեան . . . . .	Վան	»	—	—	—
40 Աւետիս Աղաճանեան (6) . .	Արաբկիր	»	92	81	75
41 Մարտիրոս Պալթայեան . .	»	»	—	—	—
42 Սարգիս Մելիքեան . . . . .	»	Թոշակաւր.	89	78	70
43 Ստեփան Սշճեան . . . . .	Տիարպէքք	Երթեւեկ	85	75	70
44 Վահան Մէֆէրեան . . . . .	Կ. Պոլիս	»	90	81	—
45 Տիգրան Սուլթանեան . . . .	Նիկոսիա	»	90	83	78

(5) Եւ (6). — Այս երկու ուսանողաց պատկանն է Մեծ. Պետրոս Էմ. Կարապետեան 'ի Գանիբէ.

## ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԵՐ

### Ի ՄԱՆՁԵՍԹԸՐ

	ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԻԼ. ԲԷՆԻ		
Մեծ. Մինրան Մուրատեան	5	—	—
» Տեարք Գարակէօղեան	5	—	—
» Մ. Թօքատեան	5	—	—
» Մարանեան Եղբարք	5	—	—
» Սարգիս Քուլումճեան	4	—	—
» Տիգրան Մուրատեան	3	—	—
» Աստարճեան	3	—	—
» Ստամպոլլուեան	3	—	—
» Քնածեան Եղբարք	3	—	—
» Սիւզմէեան Գամպէրեան	2	—	—
» Յ. Բաբաղեան եւ Որդիք	2	—	—
Արժ. Տ. Թորոս քահ. Տ. Իսահակեան	—	15	10
Մեծ. Մարտիկ Յովնանէսեանի շնորհիւ	30	—	—
» Յ. Կ. Յովակիմ (Ճաւա), շնորհիւ	1	—	—
Մեծ. Ն. Արաթուհի	1	—	—
	<hr/>		
	71	15	10

Մեծ. Ֆրնաւքլեան Եղբարք, խոտաւոյճ եւ Տիգրանակերացի որբի մը պաշտպանութիւնն ստանձնել, յառաջիկայ շրջանէն սկսեալ:

### Ի ԼՈՆՏՈՆ

	ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԻԼ.	
Մեծ. Տեարք Գ. եւ Կ. Կիւլլէնկեան	10	—
British & Foreign School Society	5	—

### Պատ. Օժանդակ Մասնաժողովոյ ճնուիր

Մեծ. Ն. Ներսէսեան	5	—	
» Մ. Ներսէսեան	3	—	
Մեծ. Ա. Կիւլլէնկեան	3	—	
» Յ. Զիլիանեայ	3	—	
» Բ. Սելեան	2	—	
» Տ. Տէօլլէթեան	2	—	
» Ճիլմէճեան	2	—	
» Յ. Սօրկուճ	1	—	
» Ոմն	1	10	
» Յ. Ոսկերիչեան	—	10	
» Արսլանեան	—	2	
» Քէնեասեան	—	2	
» Երկաթեան	—	1	
» Վարչութիւնն Նախկին Հայկ. Ընթերցարանին	1	15	
	<hr/>		
	25	—	25
			<hr/>
			40

Ի ԲԱՐԻՉ

(Ազն. Տիկին Տ. Խ. Ներսիսեանի շնորհիւ ստացուած գուճ Անգղ. ոսկի 48. 5. 7ի ցուցակը).

	ՖՐԱՆՔ
Վսեմ. Տիկին Նուպար բաշա	300
Ազն. Տիկին Աղասեան	10
» Զարմիկեան	10
» Կեսարեան	20
» Տօքթ. Կոպերնիկ	10
» Խ. Հաճեան	20
» Լ. Ճէվա՛իրճեան	10
» Մ. Յովակիմեան	20
» Պատմաճեան	100
» Տիւվինաժ	5
Մեծ. Վենոան Աճէմեան	5
» Ստեփան Անանեանց	5
» Սիսակ Աչճեան	20
» Յ. Ասրանկիւլ	10
» Պ. Արփաճեան	20
» Բարունակեան	5
» Կ. Բէնիլիվանեան	50
» Բրիմի	20
» Մ. Գալուստեան	10
» Թ. Գարակէօղեան	40
» Ա. Էփնայեան	50
» Թընկըր Եղբարք	40
» Լեւոն Թուղլաճեան	20
» Մ. Ինճէեան	20
» Սաչիկ Լաքրուա	20
» Հ. Համբարձումեան	20
» Թ. Համբարձումեան	10

	ՖՐԱՆՔ
Մեծ. Դ. Հիւնքեարպէյէնեան	10
» Յ. Ղարիպեան	10
» Ն. Մանուկեան	20
» Ա. Մարկոսեան	40
» Ա. Միհրան	20
» Մ. Յովսէփեան	25
» Գ. Յովսէփեան	10
» Խ. Ներսէսեան	25
» Ոմն	20
» Ոմն	10
» Ոմն	10
» Ոմն	5
» Չիչէքճեան	5
» Չ. Սարգիսեան	20
» Մ. Սարրեան	10
» Ա. Սեթեան	20
» Տօքթ. Սըքրեան	15
» Ս. Սվաճեան	30
» Յ. Տօղրամաճեան	26
» Տիրան Քէմհաճեան	20

1221

(Նոյնպէս ի Բարիզ, Տիար Քիւրքեանի ձեռամբ ստացուած Անգղ. ոսկի 23. 12. — ի ցուցակը).

Պատ. Օժանդակ Մասնաժողովէն իբր կանխավճար յառաջիկայ տարւոյ	500
Մեծ. Տ. Էքիլէր	50
» Մ. Լաթիֆ	20
» Տօքթ. Սըքրեան	15
» » Քէմհաճեան	10

595

**Դ ՄԱՐՏԻՅԵ**

Ազն. Տիկին Եղիաբէթ Հեծուղեանց	50
Մեծ. Յովհաննէս Կիւմշեան	50
» Արմէն Միրզայեանց	50
» Միհրան Թէքէնան	40
» Յակոբ Սեբեան	40
» Գ. Համբարձումեան	20
» Գ. Հայրումեանց	25
	<hr/>
	275

**Դ ԺԸՆԷՊ**

M. François Chaponnière, Genève 10

**Դ ՄԱՐՏԵԱԼ ՆԱԿԱԳՄ ԱՄԵՐԻԿԱՅԷ**

ԱՆԿՆ. ՈՍԻՔ

Արժ. Վաղինակ վարդապետ Միտակեանի  
 ձեռամբ հանդանակուած եւ Ազգ.  
 Պատրիարքարանի շնորհիւ ստա-  
 ցուած 10 առջար 2 —  
 Society of Friends of Armenia, Boston 5 —

**Դ ԳՍԷԻՐԷ**

Մեծ. Բաղրիկ Էճ. Նաեապետեանի շնորհիւ ստացուած  
 գրու Սեպտ. ակի 30. 11. 6 գուճարի ցուցակը )  
 Արժ. Տ. Մամբրէ քա՛հ. Վարդանեան 200  
 Ազն. Տիկին աջրի Եւփիմէ Պետրոսեան 97. 50

ԱՅԿՈՑ. ՈՂՋՂԻՐԵ

Մեծ. Բարթիկ Նահապետեան	300
» Մարտիկ Քէրէսթէճեան	200
» Իփիգրծեան եւ Ընկ.	200
» Միհրան եւ Տիգրան Արթին	200
» Մ. Անտնեանց	100
» Գ. Գըմբէճեան	100
» Սեդրաք Դաւիթեան	100
» Յովհաննէս Եազրճեան	100
» Տրդատ Զօհրապեան	100
» Սարգիս Մելիքեան	100
» Առաքել Պէրպէրեան	100
» Տիգրան Սահակեան	100
» Գ. Է. Սէլվաճեան	100
» Սիվրիսարեան Ազնաւորեան	100
» Յովհաննէս Տէրվիչեան	100
» Մ. Մանուկեան եւ Ընկ.	97 50
» ՈՅՆ	97 50
» ՈՅՆ	97 50
» ՈՅՆ	97 50
» Շահրուղեան Եղրարք	60
» Յարութիւն Բէմաճեան	48 75
» Սարգիս Պրւլպիլեան	40
» Մընտիքեան Եղրարք	40
» Ղուկասեան Եղրարք	40
» Իսկէնտէր Հոդետունի	20
» Կարապետ Պէյ Շէրիաճեան	20
» Յովհաննէս Սէմէրճեան	20
» ՈՅՆ	20

2996 25

Ազն. Տիկին Թադուհի Յակոբեան (մաս-  
 հատոր նամակով) 195

(Նոյնպէս 'ի Գահիրէ, Տիար Բիւրճեանի ձեռագիր  
ստացուած անգղիական ոսկի 4Պ. 5. 8 գումարի ցուցակը .

ԵԳԻՊՏ. ՈՂՋ ՂՐՇ.

Վսեմ. Տիգրան Բաշա Ապրօ, հաճեցաւ ստորագրուել մէկ սանի համար տարեկան 10 Անգղ. ոսկի յառա- ջիկայ շրջանէն :	
Մեծ, Պետրոս էֆ. Կարապետեան պաշտ- պանեալ երկու սաներու համար, տարեկան 20 Անգղ. ոսկի	1950
Պատ. Բարեգործական Ընկերութիւն Հայոց, պաշտպանեալ մէկ սանին համար վեցամսեայ նպաստ	487 50
Մեծ. Սարգիս Մելիքեան	487 50
» Բարթիկ Նահապետեան	292 50
» Հաճի Կարապետ Գրիգորեան, 'ի Մինիյէ	195
» Ստեփան Յովհաննէսեան, 'ի Մինիյէ	195
» Եագուպեան Եղբարք	195
» Յ. Պուսապեան	195
» Արիեան Եղբարք	97 50
» Իբլիքեան եւ Ընկ.	97 50
» Գրիգոր Նիկողիմոսեան	97 50
» Սիվրիսարեան Ազնաւորեան	97 50
» Սերովբէ Բէյիզօֆ	60
» Յ. Ճէպէճեան	60
» Նշան Մալումեան	50
» Սեդրաք Օտապաչեան	50
» Սարգիս Պիւլպիւլեան	40
» Մկրտիչ Պալրզճեան	40
» Կ. Չուլաքեան	20

ԵԳԻՊՏ. ՈՂՋ ՂՐՇ

Մեծ. Ա. Թ. Աբրահամեան, Ռանկունցի	20
» Տ. Պուտաքեան	20
» Ոմն	20
	-----
	4805

(Նոյնպէս 'ի Գահիրէ ստացուած նպաստներ երեք աւանդաց  
միջեւ Կիպրոս քանապարհորդաձախուց հաճար )

ԵԳԻՊՏ. ՈՂՋ ՂՐՇ.

Պատ. Բարեգործ. Ընկերութիւն, իր պաշտպանեալ սանին համար	146 25
Մեծ. Հաճի Կարապետ Գրիգորեան, երկրորդին համար	150
Մեծ. Սարգիս Պիւլպիւլեանի նախա- ձեռնութեամբ եւ ջանիւք՝ երրոր- դին համար նպաստեցին	
Տեսարք Սարգիս Պիւլպիւլեան	20
Եղուարդ Գարապաշ	11
Ագրիպպաս	10
Սարգիս Գարահըլանեան	10
Յարութիւն Իշլէմէճեան	10
Սարգիս Կարապետեան	10
Յ. Ճէպէճեան	10
Գարեգին Շահպազ	10
Գաբրիէլ Սրապեան	10
Երկու անձինք	10
Պօղոս Իզմիրլի	5
Շէյխ Մուհամմէտ	5
Յովհաննէտ Շահպաղեան	5
Երկու անձինք	5
Թորոս Արքմաքէշ	5

ԵՊԻՍՏ. ՈՂՋ ՂՐԾ.

Գրիգոր Գլխերճի	5
Լեւոն Միրիճանեան	4
Ֆրանկիւլ Պէրպէրեան	4
<hr/>	
	446 25

Սոյն գումարն վերոյիշեալ երեք սրբ աշակերտաց փոխադրութեան գործածուած լինելով՝ կնամակալութեան Հաշուեկշռոյն մտից եւ ելից սինակննորոն մէջ արձանագրելու հարկ չ'տեսանք:

**Ի ՅԱՄԱԿՈՍԹԱ (Կիպրոս).**

[ Առաջին տարւոյ Տեղեկագրին մէջ տեսնուած Նիկոսիոյ հանգանակութեան արդիւնքը Անդղ. ոսկի 12. 19, ներկայ տարւոյ մտից մէջ 'ի հաշիւ առնուած է, բաց ի երկու ստորագրութիւններէ — մին 10 շիլին եւ միւսը 5 շիլին — որոնք չեն գանձուած ]

Մեծ. Մ. Սըվաղլեան	5
» Վարոշցի	1
» Մ. Գրիգոր Յովսէփեան	4
» Մ. Բասիլեան	3
» Յակոբ Յ. Եսայեան	3
» Հաճի Իսազ, դապթիյէ,	2
» Արթին Գօլթուխեան	1
» Ղ. Շ.	1
» Ժանիկ Եսայեան	2
<hr/>	
	1. 2

**ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ՆՈՒԷՐՆԵՐ**

ՄԵՍԱՇՈՒՔ ԻՇԽԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ Ի ԲԱՐԻՋ,  
Մէկ սնտուկ գիրք. — բառարաններ, ընթերցանութեան եւ նուէրի յատուկ ընտիր գրքեր, գեղագրութեան տետրակներ:

ՊԱՏ. ՄԵԻՔԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿՈՅ,  
Մէկ սնտուկ գիրք: (գասադրքեր եւ գրական ու պատմական գրքեր):

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԸՆԹԵՐՅԱՏԱՆ ԼՈՆՏՈՆԻ,  
'ի նպատակ Որբանոցիս վաճառելու համար 340 օրինակ պատարագամատոյց, հանդերձ անդիւրէն թարգմանութեամբ:

RELIGIOUS TRACT SOCIETY, LONDON,  
Անդլիերէն ընթերցանութեան եւ նուէրի յատուկ գրքեր, Ս. Գրոց Պատմութեան եւ Կենդանաբանութեան վերաբերեալ պատկերներ, գումար արժէքին Անդղ. ոսկի 5. 5:

ԱՐԺ. Տ. ԹՈՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ Տ. ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ի ՄԱՆՁԵՍԹԸՐ,  
Չորս վերմակի ծածկոց, 30 ետրոտ շայագ, եւ մէկ գնդակ Ֆուղ պօլ խաղի համար:

ՄԵՍ. ՏԻԱՐ ՆԻԿՈՂՈՍ ԱՐԱՅՈՒՆ, Ի ՄԱՆՁԵՍԹԸՐ,  
'ի նպատակ Որբանոցիս վաճառելու համար 100 օրինակ իր History of Armenia հեղինակութենէն:

ՄԵՍ. ՏԻԱՐ Յ. ԻՍԿԵՆՏԷՐ, Ի ԲԱՐԻՋ,  
Երկու օրինակ Անանիոս հանդէս:

ՄԵՍ. ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, Ի ՄԱՆՁԵՍԹԸՐ,  
Մէկ օրինակ Հանդէս Ամսօրեայ:

ՄԵԾ. ՏԻԱՐ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ, ՅԻԶՄԻՐ,  
Մէկ օրինակ Արեւելեան Մամուլ:

ՄԵԾ. ՏԻԱՐ Մ. ԶԵՐԱԶ, 'Ի ԲԱՌԻԶ,  
Մէկ օրինակ "Դասագիրք Կենդանաբանութեան եւ  
Մարդաբանութեան," մէկ օրինակ "Դասագիրք  
Առողջապահութեան":

ԳԵՐ. Տ. ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷ, 'Ի Ս. ԽԱԶ ԹԷՈԹՈՍԻՈՅ,  
Մէկ օր. Մոլտէս "Խորհնացու Հայոց Պատմութիւն"  
մէկ օր. "Տարտիւֆ":

ՄԵԾ. ՏԻԱՐ Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ, Ի ԳԱՇԻՐԷ,  
Մէկ պատի մեծ ժամացոյց:

ԱՐԺ. Տ. ՂԱԶԱՐՈՍ ՔԱՇ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Ի ՍԻՄՅԷՐՈՒՈՒԼ,  
Մէկ օր. "Բնար Մանկական" երգարան:

ԳԵՐ. Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵՅ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՅ, Ի Կ. ՊՈԼԻՍ  
Երկու Օսմ. ոսկի, դասագրքերու զնման համար:

ՄԵԾ. ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՏՈՍԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ  
Կէս Օսմ. ոսկի, նոյնպէս դասագրքերու համար:

ԱՐԺ. Տ. ՇՄԱՅԵԱԿ ՔԱՇԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ  
Բառասուն օրինակ «Մայրենի Լեզու»:

ԱՐԺ. Տ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՆԻԷԼԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ,  
Մէկ օր. Արեւելի քաղիւր տարեկան:

ՄԵԾ. ՏՕՔԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ.  
Մէկ օր. "Դասագիրք Առողջապահութեան" հեղի-  
նակութիւնէն:

ՕՐ. ՈՎՍԱՆՆԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ, Ի Կ. ՊՈԼԻՍ.  
Տարեկիսոյ Հնորհաւորութեան քարդեր ուսանողաց  
համար, եւ պատի օրացոյց մը:

ՕՐ. ՌԱՔԵԼ ՍԱՐԳԻՍԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ,  
Նոյնպէս Հնորհաւորութեան քարդեր եւ Ծննդեան  
պատկեր մը:

ՊԱՏ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ,  
Մէկ բազմատիպ մեքենայ ընդօրինակութեան:

ՊԱՏ. ԳՐԻԳՈՐ ՊԷՂԷՆԵՒԼԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ,  
Որբանոց այցելութեանն առթիւ՝ աշակերտաց մատ-  
նաւոր հացկերոյթ մը տալու համար մէկ  
Անգղ. ոսկի:

ՏԻԿՆԱՅՔ ԻԻԹԻՃԵԱՆ ԵՒ ԿԻՎԷՋԵԱՆ, ԵՒ ՏԻԱՐՔ Ա. ՄԵԼԻՔԵԱՆ  
ԵՒ Յ. ԵՐԱՄԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ,  
Հաճեցան մի քանի անգամ մրգեղէններ եւ ընդե-  
ղէններ զրկել աշակերտաց համար:

ՄԵԾ. ՏԻԱՐ Ա. ՄԵԼԻՔԵԱՆ,  
Իր երախային մկրտութեան առթիւ մասնաւոր  
հացկերոյթի հրաւիրեց բոլոր աշակերտները:

ՄԵԾ. ՅՈՎՍԷՓ ՄԱԿԱՐԵԱՆ, Ի ՆԻԿՈՍԻԱ,  
Նոյնից մէկ գառնուկ, մէկ հաւ:

ՄԵԾ. ՏԻԳՐԱՆ ՄԻՆԹԱՐԵԱՆ, Ի ՍՈՇԱԿ (ԵԳԻՊՏՈՍ).  
50 զրշ. ողջ Եզրիպո. դասագրքերու զնման համար:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԾՈՒԵԿԱԾՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Մութ

1 Մարտ 1898 — 28 Փետր. 1899

514

1898 Փետր. 28	Անգղ. ոսկի	Շիլին	Բենթ
Ա. արւոյ Հառուելոտոյն կօնա զումարը	112	17	7
Ազն. Տիկին Տ. Ն. Ներսէսեանի ընտրիւ ՚ի Բարիզ հանգանակեալ 1221 Յրանգին փոխարէն զուսք	48	5	7
Մեծ. Տար Կ. Քիրքենեանի ձեռամբ սացուած, ՚ի Բարիզ 595 Ֆր.	23	12	
Մեծ. Տար Կ. Քիրքենեանի ձեռամբ սացուած, ՚ի Մարտիկ 275 Ֆր.	11		
Մեծ. Տար Կ. Քիրքենեանի ձեռամբ սացուած, ՚ի Փրնէկ 10 Ֆր.		8	
Մեծ. Տար Կ. Քիրքենեանի ձեռամբ սացուած ՚ի Գանհրէ	49	5	8
Գանհրէէն Ազն. Տիկին Թ. Յակոբեանէ	2		
Լոնսոնէն, Պաս. Օժանգակ Մամանձողովէն	25		
» Տարք Կիլլայէնիեանէ	10		
» Պրիմիշ ԷՆՏ ՅՈՒՆ ԸՄՔՈՒՄ ԸՍՍԱՅԷԹԻԷՆ	5		
Գանհրէէն, Մեծ. Բարթիկ ԷՅ. Նանայեսեանի ընտրիւ	30	11	6
Ամերիկայէն, Արժ. Վաղինակ վարդ. Սիսակեանի ընտրիւ	2		
ՍՕՍԱՅԷԹԻ ՕՎ. ՅԻՆԵՏՍ ՕՎ. ԱՐՄԻՆԻԱ, ընտրիւ Մեծ. Տար Ա. Սելեանի ՚ի Պոսրն	5		
Նուիրասուռլիւնի ՚ի Մանչեսթըր	71	15	10
Մեծ. Տար Ա. Ժամկոչեանէ ՚ի Մանչեսթըր, միամեայ քոսակիր սանի համար	10		
Նուիրասուռլիւնի ՚ի Նիկոսիա եւ ՚ի Յամակոսթա	14	1	
Կօնա քոսակաւորներէ սացուած Անգղ. ոսկի ՚131.4.11 զումարին, որոյ Անգղ. ոսկի 65.10.բ նախորդ Հառուելոտոյն մօթից կարգն անցած էր	61	14	11
Կիպրոսի մէջ զրբերու վաճառումէ		15	7
» » քեփի »		14	7
THE HONORABLE AUGUSTA LEIGH սիկնոջ կսակակատարներէն, բարեխօսութեամբ եւ ընտրիւ Մեծ. Տօֆ. Քալանքարեանցի ՚ի Մարսթօր	50		
	537	2	3

1899 Փետր. 28	Անգղ. ոսկի	Շիլին	Բենթ
1897 Օգոստոսէն մինչեւ Սեպտեմբեր, եւ ապա 1898 Մայիսի վերջէն մինչեւ 1899 Քունյարի վերջը, Տեառն Մեծ. Տար Կ. Քիրքենեանի հանապարհորդութեանց ծախքը	83	4	
Նախորդ Տեղեկագրայ Տղագրութեան ծախքը	5	8	9
Թղթաստրի, հեռագրայ եւ այլ ծախսոց	2	19	6
Կրթարան—Որբանոցիս միամեայ ծախսոց զումարն, ըստ Պաս. ՏՅՈՒՆԻ ՆՈՒՆԻ ԿԱՅՈՒՆՍԻՆԻ:	335	16	6
Պասրասուս դրամ, Պաս. ՏՅՈՒՆԻ ՆՈՒՆԻՆԻ	15	1	3
» » Գանձապան Տար Ա. Եղիազարեանի ձեռքը	94	12	3
	537	2	3

Մանչեսթըր, 28 Փետրվար 1899

**Ի դիմաց հնամանակարւթան**

ՍԱՐԳԻՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ Գանձապան  
ՅՈՎՀ. ԱՆԿԻԱՍՅԱՆ Պաս. Բարսուղար



# ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ

## Ի Կ Ի Պ Ր Ո Ս

### Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

#### Հաստատութիւն.

1. Այս հաստատութիւն, որ բացուած է Կիպրոսի նիկոսիա քաղաքին մէջ՝ կ'աւանդէ ուսումնական եւ արհեստական կրթութիւն, եւ կ'ընդունի ձրիաւարժ եւ թոշակաւոր աշակերտներ:

#### Որքեր.

2. Իբրեւ ձրիաւարժ կ'ընդունուին՝ հայազգի որք ու անտէրունչ պատանիներ: Ասոնց թիւը՝ ի սկզբան կը լինի 20, եւ հետզհետէ կ'աճի նպաստներու համեմատութեամբ:

3. Որք աշակերտներն ընտրութեամբ կ'ընդունուին հայաբնակ գաւառներէ՝ ազգային հոգեւոր իշխանութեանց յանձնարարազրով, եւ այն բացարձակ պայմանով որ՝ անոնց մասին կանխաւ մանրամասն տեղեկութիւն արուի Տնօրէն խորհրդին եւ հաւանութիւն առնուի:

4. Այն բարեսէր անձինք որոնք կը փախաքին իրենց անունով քրդեգրեալ որք մը պահել հաստատութեանս մէջ՝ պէտք է վճարեն տարեկան 10 անգլ. ոսկոյ նպաստ:

5. Որք աշակերտներն իրենց շրջանը աւարտելէ յետոյ՝ պարտին հաստատութեանս ուսումնական կամ արհեստական ձրւղին մէջ ձրիաբար ծառայել երկու տարի, եթէ Տնօրէն խորհուրդը հարկ համարի:

#### Թոշակաւորներ.

6. Թոշակաւոր դիշերթիկներէ՝ առանց բացառութեան կը պահանջուի 12 անգլ. ոսկի տարեթոշակ՝ մտունդի, հաղուստի, մարրութեան, բժշկի եւ դպրոցական բոլոր պիտոյից համար:

7. Երթեւեկ աշակերտներու համար պէտք է վճարուի տարեկան մէկ անգլ. ոսկի տուրք՝ բաց ի դպրոցական պիտոյից ծախքէն:

8. Վճարող աշակերտներէ կանխիկ կը պահանջուի իրենց տարեկան թոշակ, բայց երբ հարկը ստիպէ՝ վեցամսեայ վճարումներ ալ կրնան ընդունուիլ:

9. Գիշերթիկ թոշակաւորներէ կանխիկ կը պահանջուի նաեւ՝ 2 անգլ. ոսկի պահեստի դրամ: Այս գումար կը յատկացուի ճանապարհածախսի, երբ աշակերտն իր ընթացաւարտութենէ առաջ կամ յետոյ հայրենիք վերադառնայ վերջնականապէս:

10. Թոշակաւոր ուսանողներու ծնողք կամ պաշտպանք պարտին իրենց ամենամերձ նաւահանգստին մէջ յոյց տալ փոխանորդ մը, որպէս զի երբ հարկ լինի՝ անոր խնամոց յանձնուի իրենց զաւակ:

11. Տարուան ընթացքին մէջ ո՛ր եւ է պատճառաւ հրաժարող կամ արձակուող աշակերտն իր վճարած գումարէն ոչինչ կրնայ յետ ստանալ:

12. Ամառնային արձակուրդը կը տեւէ երկու ամիս, — Յուլիսի սկիզբէն մինչեւ Սեպտեմբերի սկիզբը (ըստ նոր Տոմարի): Այդ միջոցին թոշակաւորք կրնան վերադառնալ իրենց հայրենիքը, պայմանաւ որ՝ երթեւեկութեան ամեն ծախք եւ խնամք իրենց ծնողաց կամ պաշտպանաց վրայ լինի:

**Ընդհանուր պայմաններ.**

13. Ամեն նորեկ աշակերտ, թոշակաւոր թէ ճրիւփարժ, պէտք է ներկայացնէ իր ծննդեան եւ մկրտութեան, պատուաստի եւ առողջութեան, ինչպէս եւ բարի վարուց վկայականները: Տաճկաստանցի աշակերտք պէտք է ունենան նաեւ Թեզքեթի Օսմանիյէ:

14. Յառաջանալու անընդունակ աշակերտները, եւ անոնք որոնց ներկայութիւնը կրթարան-Որբանոցին համար վնասաբեր կը դատուի՝ պիտի արձակուին Տնօրէն Խորհրդոյ որոշմամբ: Եթէ ծնողք ունին՝ անոնց մօտ պիտի խրկուին, եթէ որք են՝ իրենց հայրենի քաղաքի հոգեւոր իշխանութեան:

**Յայտագիր ուսմանց.**

15. Կրթարան-Որբանոցին շրջանը կը տեւէ չորս տարի: Ուսումնական ճիւղին մէջ կ'աւանդուին հետեւեալ առարկաները՝

- Հայերէն,
- Թուրքերէն,
- Անգղիերէն,
- Կրօնք, (Ս. Գրոց պատմութիւն եւ Հայ եկեղեցւոյ վարդապետութիւն),
- Պատմութիւն Հայոց եւ Օսմանցոց ,
- Աշխարհագրութիւն,
- Թուաբանութիւն,
- Իրագրիտութիւն,
- Առողջաբանութիւն,
- Գեղագրութիւն եւ Գծագրութիւն,
- Երաժշտութիւն (եկեղեցական եւն),

16. Թոշակաւոր աշակերտները, եթէ առ նոսազն

15 հոգի լինին՝ 4 տարուան շրջանէն վերջ կրնան շարունակել բարձրագոյն նախակրթարանի ընթացք մ'ալ, յորում կ'աւանդուին՝

- Հայերէնի, Թուրքերէնի եւ Անգղիերէնի շարունակութիւն,
- Փրանսերէն,
- Աշխարհագրութիւն առեւտրական,
- Պատմութիւն ընդհանուր ազգաց,
- Ուսողութիւն (Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Տոմարակալութիւն),
- Բնական գիտութիւնք, (Բնապատմութիւն, Տարբարանութիւն, Բնաբանութիւն)

**Արհեստանոց.**

17. Հաստատութիւնս ունի Արհեստանոցի բաժին մը: Ամեն աշակերտ՝ Տնօրէն խորհրդոյ հաւանութեամբ պիտի ընտրէ արհեստ մը, որուն պիտի հետեւի օրական երկու ժամ կամ աւելի: Արհեստանոցի բաժինն առայժմ կ'ուսնենայ հետեւեալ ճիւղերը

- Ատաղձագործութիւն,
- Կօշկակարութիւն,
- Դերձակութիւն:

**Փոփոխութիւնք:**

18. Կրթարան-Որբանոցս թէեւ առ այժմ Կիպրոսի մէջ հաստատուած է՝ բայց եթէ ո՛ր եւ է ժամանակ աւելի օգտակար եւ նպաստաւոր համարուի զայն փոխադրել մի ուրիշ տեղ՝ խնամակալութիւնն այդպիսի մի անօրինութիւն ընելու իրաւունքն իրեն կը վերապահէ:

19. Խնամակալութիւնն իրեն կը վերապահէ նոյնպէս՝ այս Կանոնագրի մէջ փոփոխութիւններ կատարելու վրա ունըը:

**Թորակցութիւնք.**

20. Թէ՛ ձրիավարժ եւ թէ՛ թոշակաւոր աշակերտաց ընդունելութեան, եւ դպրոցական ո՛ր եւ է խնդրոյ վերաբերեալ գրութիւնք պէտք է ուղղուին՝ « առ Տնօրէն խորհուրդն Աղգային Կրթարան-Որբանոցին, ի Նիկոսիա:», (Direction de l'Orphélinat Arménien, Nicosie, Chypre).

**Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ք**

**Խնամակալութիւն.**

21. Կրթարան-Որբանոցին վարչական մարմիններն են՝ Խնամակալութիւն եւ Տնօրէն խորհուրդ: Խնամակալութիւնը, իբրեւ մի մնայուն Յանձնաժողով կազմուած է ի Մանչեսթըր, տեղւոյն Հայոց հոգեւորձովուն նախագահութեան ներքեւ, եւ Անգլիաբնակ ծանօթ աղգայնոց անդամակցութեամբ: Հաստատութեանս վերին հսկողութեան, ծախուց անօրինութեան եւ համարառութեան, ինչպէս եւ պաշտօնէից ընտրութեան իրաւունքը կը պատկանի այս մարմնոյն, որ փոխադարձաբար՝ պարտականութիւն կ'ստանանէ գանձել բարեսէրներու նպաստները եւ իրաշխարհել ասոնց բարւոք գործածութիւնը: Խնամակալութիւնը կրնայ ունենալ զանազան կեդրոններու մէջ Օժանդակ մասնաժողովներ՝ նուիրատուութեան գործը զիւրացնելու համար:

**Տնօրէն Խորհուրդ.**

22. Տնօրէն խորհուրդը՝ խնամակալութեան ներկայացուցիչ մարմին է ի Նիկոսիա: Կիպրոսի Հայոց Առաջնորդը, եւ Կրթարան-Որբանոցին Տեսուչը, որոնք մնայուն

անդամ կը լինին Տնօրէն խորհրդին՝ Խնամակալութեան հաւանութեամբ մէկտարուան համար յանդամակցութիւն կը հրաւիրեն տեղաբնակ բանիմաց եւ պատուաւոր աղգայիններէ երկու հոգի եւս, եւ այսպէս կը կազմեն Տնօրէն խորհուրդը: Այս մարմին կ'ստանանէ հաստատութեանս անմիջական հսկողութեան, մատակարարութեան եւ ընթացիկ գործոց կարգադրութեան հոգը: Տարեկան ծախուց նախագիծը պատրաստելով՝ խնամակալութեան վաւերացմամբ կը գործադրէ, կանոնաւոր տեղեկագիրներով Խնամակալութեան հետ կը հաղորդակցի եւ հրահանքներ կ'ստանայ: Թոշակաւոր աշակերտաց վճարումները եւ պատահական նուէրները կը գանձէ ի հաշիւ Խնամակալութեան, եւ այս ամենուն հետ մէկտեղ՝ կը հսկէ Կրթարան-Որբանոցին բարեկարգ զարգացման եւ Կանոնագրի ճշգիւ գործադրութեան:

**Հ Ա Ս Ս Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Ա Ս Ի Ն**

**Վկայութիւն Գերաւեժար Մր. Սրէնարի**

Մեծ հաճոյքով կը յայտնեմ թէ այցելած եմ այն Որբանոցն ու վարժարանը զոր կը վարէ Պ. Վահան Քիւրքճեան եւ կը հաւատամ որ լաւ եւ օգտակար գործ կատարուած է եւ կը կատարուի անդ:

Այս հաստատութիւն կը գտնուի ընդ վարչութեամբ մի տեղական ժողովոյ, որոյ նախագահն է Պ. Իւթիւճեան,

Կառավարութեան պաշտօնագրոյ Աւագ թարգմանիչը,  
եւ ամեն կերպով արժանի է աշակցութեանն անոնց՝  
որոնք կը համակրեն Հայ ժողովրդին:

Ճ Օ Ջ Ա Յ Է Ս Բ Է Ն Ս Ը Բ

Քանաայի կիպոս

Եւ Ն. Վ. Դպրոցական Տեսուչ

15 Յունիս 1898

Նիկոսիա

Յռնարէն Ծօնի դիւ Գիբրու յրագրոյ իջըւ-  
քագրապէս Տ. Նիփօքոյոս գրած է՝

Ինչպէս որ ամենուն ծանօթ է, մի տարիէ աւելի է  
որ կիպոսի Մայրաքաղաքին մէջ Հայկական Որբանոց  
մը հաստատուած է, եւրոպացիական ունեւոր հայերու  
նիւթական օժանդակութեամբ: Այս Որբանոցին մէջ, զոր  
անցեալ օր պատահամբ այցելեցինք, կը պահպանուին  
37 հայ մանուկներ, մեծ մասամբ կիլիկեցի:

... Շատ գովելի են անոնք, որ այս նուիրական  
հաստատութիւնը հիմնած եւ անոր պահպանումը ստանձ-  
նած են: Ինչ որ մասնաւոր ուշադրութիւն կը դրաւ է  
այս հաստատութեան մէջ՝ տիրող գործնական ոգին է:  
Բազմի այս անժառանգ արարածներուն ոչ միայն սրբ-  
տաւորիչ կերպիւ կ'աւանդուի մտաւորական կրթութիւն  
եւ երեք լեզուներ, երեք փորձառու ուսուցչաց միջոցաւ:  
այլ եւ կը պահանջուի անոնցմէ պարտաւոր լինիլ, հետեւ-  
եալ երեք արհեստներէն մինսոր լիլ, որ են—Կօշկարութիւն,  
Դերձակութիւն եւ Ատաղձագործութիւն. որպէսզի այս-  
պէս թէ՛ մտաւորապէս եւ թէ՛ գործնականապէս կազմա-  
կերպուին եւ ապագայ հայ քաղաքացիներ, ընկերութեան

օգտակար անդամներ դառնան: Այս տեղ կը տեսնուին  
8 տարեկանէ մինջեւ 12—15 տարեկան պատանիներ  
որոնք ջերմեանդութեամբ իրենց լուրջ աշխատութեան  
մէջ կը գտնեն նաեւ՝ իրենց վշտերուն հանգստութիւն  
եւ իրենց դառնութեանց մոռացումն:

Ամենայն գովեստի արժանի են նոյնպէս այս Որ-  
բանոցին հսկողներն իրենց կողմէ տղայոց ցոյց արուած  
հայրական գորովին համար. բան մը չեն խնայեր որբու-  
թեան հայն աւելի նուազ դառն ընելու համար անոնց:  
Հսկողներուն ընդհանրապէս, բոլոր տղայոց ցուցուցած  
ազնիւ վերաբերմունքը, Որբանոցին մէջ տիրող հիանալի  
կարգն ու կանոնը, եւ այնտեղ շնչող գործնական ոգին,  
յերաւի իւր կոչման արժանի կը կացուցանեն այս հաս-  
տատութիւնը, որ հիմնուած է քանի մը հայերու մարդա-  
սիրական եւ հայրենասիրական զգացմանց եւ փոխադարձ  
համերաշխութեան ոգով:

(Ծօնի դիւ Գիբրու  
Օգոստ. 11)23. 1898)

Գնահատում եւ գովումնակոթիւն

Նիկոսիա հաստատուած հայ տղայոց յատուկ գիշե-  
րօթիկ Որբանոցին եւ Վարժարանին յաջող ընթացքն  
ուսմանց եւ կրթութեան շաւղի մէջ՝ ի վաղուց կը լսուէր  
կատարեալ գոհանակութեամբ:

Անցեալները լրագրոյս արտօնատէրն, Վսեմ. Տէրվիչ  
Փաշա, անձամբ այցելած լինելով յիշեալ վարժարանը՝  
գրուատալից խոսքերով կը յայտնէ թէ աշակերաներուն  
ուսման մէջ յաջողակութիւնն եւ կարողութիւնը եւ

վարուց մէջ բարեկրթութիւնը, նոյնպէս փողոցէ անցու-  
 դարձի ատեն նոցա ցոյց տուած կանոնաւորութիւնը, եւ  
 դպրոցին ներքին եւ արտախին մասերուն, ննջարաննե-  
 րուն, անկողիններուն եւ այլ բաժանումներուն մէջ տիրող  
 կարգաւորութիւնն ու մաքրութիւնը զիտողներու գնա  
 հատական ուշադրութիւնը գրաւող վիճակի մէջ գտած է:  
 Ուստի յանուն կրթական գործին շնորհակալութիւն կը  
 յայտնեմք առ Քիւրքճեան էֆէնտի, Տնօրէն եւ առաջին  
 ուսուցիչ յիշեալ վարժարանի՝ այս մասին իր ՚ի գործ  
 դրած ջանիցն համար:

(Զեման 12)24 Մարտ 1899)

**Այցեւորաց տուարէն**

Հայ-բողոքական հոգեւոր հովիւ Պատ. Յարութիւն  
 Սարգիսեան կը գրէ:

« 1)13 Յունվար 1899

Շատ անգամ այս դպրոցն այցելած եւ կացութեանը  
 մօտէն տեղեկացած լինելով անոր կառավարման եւ  
 ուսուցման եղանակները, տղոց շարժմանց եւ ընթացից  
 մէջ տեսնուած շնորհքը, դպրոցին մէջ տիրող կարգու-  
 կանոնն ու մաքրութիւնը, եւ ուսուցչաց առ աշակերտս  
 ցուցած հայրական սէրն ու կատարեալ հոգածութիւնը  
 զիս ՚ի սրտէ ուրախացուցած է: Այսօր, կազանդի առթիւ  
 իմ ուղղած խրատական խօսքերուս աշակերտներուն  
 ընծայած ուշադրութիւնն, ու հարցումներուս տուած  
 պատասխաններն, նոյնպէս իրարու հետ նոցա ունեցած  
 ազնիւ եւ կիրթ վարմունքն կը հաւատացնեն զիս որ  
 այս տղայք ազգի եւ կրօնքի օգտակար անհատներ պիտի  
 ըլլան:


ԵՐԷՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ,,

ԾԱՆՕԹ.— Նախապէս դիմուած սպարանի վր կողմէ  
 յարուցեալ անակնկալ մի դժուարութիւն՝ Տեղեկագրուս  
 աւելի կանուխ հրատարակումն արգելից:

21472

2013

<< Ազգային գրադարան >>



NL0050308

